



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1,

հեռ. +(374 11) 514-240

№ Հ/45

06.02.2019թ.

*«hetq.am» կայքի լրագրող
Տիրայր Մուրադյանին*

Հարգելի Տ. Մուրադյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությունից տեղեկացնում են, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի համաձայն գույքի անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 608 հոդվածով, 612 հոդվածի 1-ին կետով և 2-րդ կետի առաջին պարբերությամբ, 617 հոդվածով, 624 հոդվածի 2-րդ կետով, 626 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով սահմանված կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել գույքի անհատույց օգտագործման պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ

մասին ծանուցելով մյուս կողմին, եթե ծանուցման այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրով:

Հիմք ընդունելով վերոգրյալ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթները Երևանի քաղաքապետարանի կողմից համապատասխան ծանուցում է ուղարկվել «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը՝ պայմանագրից հրաժարվելու մասին, որը սահմանված կարգով կազմակերպության կողմից ստացվել է, և ներկայումս միջոցներ են ձեռնարկվում կազմակերպության անվամբ իրականացված իրավունքի պետական գրանցումը չեղարկելու ուղղությամբ: